

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Դեմոկրատներու եւ Հանրապետականներու Տարբերութիւնները

Անցեալ շաբուայ ընթացքին միլիոնաւոր ամերիկացիներ հետեւեցան Հանրապետական եւ Դեմոկրատ Կուսակցութիւններու նախընտրական քանակութիւններուն:

Հանրապետական թեկնածուները կը խօսէին կարգավիճակ չունեցող միլիոնաւոր գաղթականներ երկրէն արտաքսելու, հարաւային սահմաններու վրայ պատ կառուցելու, մահմետականներու Ամերիկա մուտքը արգելելու, իսլամական պետութեան ահաբեկիչներու գտնուած վայրերը հիմնապատակ կործանելու եւ ժողովուրդին հետ գետնին հաւասարեցնելու, միլիոնաւորներ թշկական ապահովագրութենէն զրկելու, հարուստներու տուրքերը նուազեցնելու եւ աղքատներուն տրուող նպաստները կրճատելու եւ նման՝ այլամերժութեան վրայ կառուցուած նախընտրական ծրագիրներու մասին:

Առաջատար թեկնածուները կը վիճէին, փաստելու համար, որ իրենք աւելի ծայրայեղ են քան իրենց մրցակիցները: Բաւական մեծ թիւ կազմող ու աղմուկոտ հանրապետական ամբոխի մը կողմէ «առեւանգուած» այս կուսակցութիւնը, կորսնցուցած է իր նախկին դիմագիծը՝ որպէս չափաւոր պահպանողական կուսակցութիւն մը:

Միւս կողմէ, Դեմոկրատ կուսակցութեան քանակութիւնը մասնակցողները կը խօսէին աւելի արդար հասարակարգի մը մասին: Անոնք կը ներկայացնէին անապահով խաւերուն օգնելու եւ միջին դասակարգի վիճակը բարելաւելու, նուազագոյն աշխատավարձը բարձրացնելու, ահաբեկչութեան դէմ պայքարը մտածուած ձեւով առաջ տանելու, փոքրամասնութիւններու իրաւունքները պաշտպանելու եւ այլ ծրագիրներու մասին, որոնք կը ձգտէին Ամերիկացի ժողովուրդի ընդհանուր քարոզութեան եւ բարգաւաճումին:

Բաղդատելով երկու թեկնածուները վրայ արտայայտուած տեսակետները եւ գանձնքները կայացնելու եղանակները, ի յայտ կու գայ որ, հանրապետականները վերջին տարիներուն, յատկապէս նախագահ Պարալ Օպամայի ընտրութենէն ասդին, դարձած են աւելի ու աւելի ծայրայեղ կուսակցութիւն մը, որու արտայայտած գաղափարները համահունչ չեն Ամերիկայի ժողովուրդ մեծամասնութեան տեսակետներուն հետ:

Որպէս Ամերիկահայեր, մենք եւս մօտէն պէտք է հետեւինք յառաջիկայ ընտրապայքարին եւ կողմնորոշուինք՝ այն ուժերու կողմին, որոնք պիտի կարողանան այս երկիրը հետու պահել ծայրայեղականներու նիւթներէն:

«ՄԱՍԻՍ»

Ալիեւի Հետ Հանդիպումէն Ետք Սերժ Սարգսեան Յայտարարեց Ատրպէյճանի Քաղաքականութիւնը Ուղղուած Է Հակամարտութեան Սրման

«Ամէն անգամ երբ Ատրպէյճանի զինուած ուժերը Հայաստանի Հանրապետութեան դէմ կը կիրառեն սկանաւետներ եւ հրետանային սարքաւորումներ, անոնք կը կրակեն Աստանայի, Տուշանպէի, Բիշկէկի, Մոսկուայի եւ Մինսկի ուղղութեամբ»: Այսպէս յայտարարեց ՀՀ նախագահ Սերժ Սարգսեան, Դեկտեմբեր 21-ին Մոսկուայի մէջ կայացած ՀԱՊԿ Հաւաքական Անվտանգութեան Խորհուրդի նստաշրջանի ընթացքին իր ունեցած ելոյթին մէջ, սկանաւետով ՀԱՊԿ-ի անդամ միւս երկիրներուն:

Ըստ Սարգսեանի, իւրաքանչիւր երկիր ունի իր շահերը, իր առաջնահերթութիւնները, բայց անոնք պէտք չէ հակադրուին մեր ընդհանուր շահերուն եւ փոխադարձ պարտաւորութիւններուն: «Ամէն անգամ, երբ Ատրպէյճանի զինուած ուժերը Հայաստանի Հանրապետութեան դէմ կիրառում են աւտոմատներ, սկանաւետներ եւ հրետանային սարքաւորումներ, նրանք կրակում են Աստանայի, Դուշանպէի եւ Բիշկէկի, Մոսկուայի եւ Մինսկի ուղղութեամբ: Յիշեցնեմ, որ մենք կանոնադրութեան մէջ ունենք համապատասխան յօդուած: Եւ եթէ մենք ոչ միայն չենք կիրառում այդ յօդուածը, չենք քննարկում ստեղծուած իրավիճակը, հարկ չենք համարում վերցնել լսափողը եւ հետաքրքրուել՝ ինչ է կատարում



ՀԱՊԿ-ի եւ ԵՏՄ-ի նիստերուն մասնակցող երկիրներու դեկավարները Քրեմլինի մէջ

դաշնակից Հայաստանում, եւ դրահետ մեկտեղ նաեւ քուէարկում ենք միմեանց շահերի դէմ՝ միջազգային կազմակերպութիւններում, երրորդ երկրներին հետ ընդունում ենք երկկողմ յայտարարութիւններ, որոնք տեքստն ուղղուած է ՀԱՊԿ դաշնակիցների դէմ, ապա մենք պարզապէս այդ կրակոցների տակ ենք դնում մեր ամբողջ կազմակերպութիւնը, նրա հեղինակութիւնը, նրա կարեւորութիւնը», - ըստ Սարգսեանի:

Ան շեշտեց, որ Ատրպէյճանի քաղաքականութիւնը ուղղուած է հակամարտութեան սրման: «Ցա-

ւօք, Տուշանպէի նստաշրջանից յետոյ իրավիճակը ոչ միայն չի կայունացել, այլեւ աւելի լարուած է ընդհանուր: Ատրպէյճանական կողմը չի սահմանափակուած ծանր հրետանու կիրառմամբ, այդ թւում՝ թրքական արտադրութեան: Դեկտեմբերի 8-ին Ատրպէյճանի զինուած ուժերը 1994թ. հրադադարի ռեժիմի հաստատումից ի վեր առաջին անգամ անցան տանկային ու մարտիկներով թափուած թուրքական զորքերով հարձակում է նոր եւ շատ վտանգաւոր մակարդակի:

Շաբ.ը էջ 5

Եւրոպական Միութիւնը Հայաստանին 30 Միլիոն Եւրօ Աջակցութիւն Կը Տրամադրէ

Հայաստանի կողմէ իրականացուող բարեփոխումներուն ուղղուած ջանքերու խթանման նպատակով, Եւրոպական Յանձնաժողովը հաստատած է 30 միլիոն Եւրօ աջակցութիւն, որ պիտի ուղղուի ֆինանսներու կառավարման եւ ժողովրդավարական որոշումներու ընդունման գործընթացին:

Եւրոպական հարեւանութեան քաղաքականութեան եւ ընդլայնման բանակցութիւններու յանձնակատար Եոհաննէս Հանը այս առթիւ ըսած է. - «Աջակցութեան այս նոր փաթեթը մեր արեւելեան գործընկերներուն թոյլ կու տայ իրականացնել վճռորոշ բարեփոխումներ: Այս լուրը բարի է յատկապէս Հայաստանի քաղաքացիներուն համար, քանի որ յատկապէս անոնք պիտի դառնան նշեալ բարեփոխումներու անմիջական կրողները՝ թէ՛ հանրային ծառայութիւններու բարելաւման եւ թէ՛ աշխատատեղերու հնարաւորութիւններու աւելացման արդիւնքով»:

Հայ Ամերիկեան Խորհուրդը Կը Քննադատէ Միւսկի Խումբի Անգործունէութիւնը՝ Ատրպէյճանի Ոսնձգութիւններուն Նկատմամբ

ՄԴՀԿ Հայ Ամերիկեան Խորհուրդը (ՀԱԽ) հանդէս եկաւ յայտարարութեամբ մը, կոչ ընելով ԵԱՀԿ Մինսկի Խումբի համանախագահներուն, վերջ տալու, տիրող կացութեան համակերպելու, իրենց կեցուածքին:

«Մինչ 2015 թուականը եղաւ աննախընթաց՝ զինեալ գործողութիւններու մակարդակի բարձրացումով եւ Լեռնային Ղարաբաղի հարցով խաղաղութեան ձգտող բանակցութիւններու շուրջ կացութեան ծանրացումով, ԵԱՀԿ Մինսկի Խումբ պէտք է ձգտի որ կացութիւնը աւելի չվատթարանայ 2106-ին», - ըսուած է ՀԱԽ-ի պաշտօնական հարողագրութեան մէջ:

Շարունակելով, յայտարարութիւնը մասնաւորապէս կ'ըսէ,-

«Մինսկի Խումբի համանախագահները երկար ժամանակ է լքել կը քաջալերեն հակամարտող կողմերը՝ ետ քաշելու իրենց ղեկավարները եւ համաձայնութեան գալու՝ միջազգային հետաքննութիւն կատարելու շուրջ, բան մը որուն համաձայնած են Հայաստան եւ Արցախ, սակայն մնացուն կերպով մերժումի արժանանացած է Ատրպէյճանի կողմէ:

«Հայ Ամերիկեան Խորհուրդը գորավիզ կը կանգնի Միացեալ Նահանգներու ներկայացուցիչներու տան Արտաքին Յարաբերութիւններու Յանձնաժողովի նախագահ էտ Ռոյսի կողմին, որպէսզի Միացեալ Նահանգները, Ռուսաս-

Շաբ.ը էջ 5

ՇՆՈՐՀԱԴՈՐ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ
 Կաթողիկէ համայնքի Ս. Ծնունդեան տօնին առթիւ «Մասիս» կը շնորհաւորէ հայ Կաթողիկէ համայնքը, մաղթելով յաջողութիւն, առողջութիւն, բարօրութիւն եւ բարգաւաճ տարի մը:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Հայաստանը Սկսում է Մոբիլիզացիա

ԹԱԿՈՐԱՒԱԼԵԱՆ

Արմենիա հեռուստաընկերության Ռ-էվոլյուցիոն հաղորդաշարի Դեկտեմբերի 20-ի թողարկմանը հիւսիսային հանրային հեռուստակայանի ղեկավար Վիգեն Սարգսեանը յայտարարել է, որ Հայաստանի ու Արցախի անվտանգութիւնը պահանջելու է գերջանքեր, եւ հայկական կողմը ստիպուած է լինելու զգալի միջոցներ տրամադրել անվտանգութեան ապահովմանը: Սարգսեանը նշել է, որ իսօքը վերաբերում է թէ մարդկային, թէ նրկական ռեսուրսներին: Ըստ նրա, այլընտրանքը կարող է լինել շատ աւելի ծանր:

Դատելով այն սահմանային գիշերներին, որ յաջորդել են Դեկտեմբերի 19-ին Թեոնում անցկացուած Սարգսեան-Ալիեւ հանդիպմանը, հնարաւոր է եզրակացնել, որ այդ հանդիպմանն առաւել լայն կարող է ձեռք բերուած լինել լայնամասշտաբ ռազմական գործողութիւնից ձեռնպահ մնալու պարտաւորութիւն, իսկ ընդհանրապէս չկարկելու հարցում Ալիեւը ոչ միայն չի գիշերել, այլ գուցէ նոյնիսկ պնդել է, որ շարունակելու է կրակել:

Վիգեն Սարգսեանը նոյն հաղորդման շրջանակում յայտարարել է նաեւ, որ հաւանաբար առաջիկայ շաբաթներին, կամ առաւելագոյն ամիսներին ընթացքում կը լինենք միջազգային հանրութեան այնպիսի քայլերի ակնատես, որոնք կը վերաբերեն հրադարձի պահանջման հարցում պատասխանատուութեան մեխանիզմի յստակացմանը: Սարգսեանը նշել է, որ կը լինեն գործնական քայլեր միջազգային յետաքննութեան մեխանիզմի ներդրման եւ մոնիտորինգի իրականացման ուղղութեամբ:

Փաստացի, Սարգսեան-Ալիեւ հանդիպումից յետոյ որոշակիօրէն հնարաւոր է ասել, որ քիչ հաւանական է 2016-ի ընթացքում լայնածաւալ պատերազմի վերսկսումը, բայց կը շարունակուի «դանդաղ» կամ «սողացող» պատերազմը, որը արդէն աւելի քան երկու տարի «ներդրել» է Ատրպէյճանն ու պահում է այն:

Դա իսկապէս նշանակում է, որ հայկական կողմից պահանջուած է գերջանք եւ ռեսուրսների գերկենտրոնացում: Ատրպէյճանը փորձում է «սողացող» պատերազմի միջոցով իրացնել իր համեմատական առաւելութիւնը, որը քանակական է: Բանն այն է, որ աւելի լայնածաւալ գործողութիւններում կը նուազի քանակական առաւելութեան էֆեկտը: Իսկ «սողացող» պատերազմում Ալիեւը փորձում է «մաշել» Հայաստանը, թէ ռեսուրսային, թէ նաեւ ներազգային իմաստով:

Առայժմ դա չի յաջողուում, ու պէտք է յուսալ, որ չի յաջողուի: Բայց դա իհարկէ յոյսից չէ կախուած: «Յոյսը» տուեալ պարագայում ենթադրուած է կոնկրետ գործողութիւններ ներքին ու արտաքին ուղղութիւններում, թէ տնտեսական, թէ քաղաքական առումով: Ընդ որում, տնտեսականն այստեղ գալիս է առաջնային պլան, եւ քաղաքական ջանքերը պէտք է ուղղուած լինեն տնտեսական խնդիրների սպասարկմանը թէ ներքին, թէ արտաքին ուղղութեամբ: Այն, որ Հայաստանը չունի գերջանքի այլընտրանք, աներկ-

բայ է: Խնդիրն այն է, թէ ինչ է հասկանում իշխանութիւնը գերջանք ասելով: Հնարաւոր է ընդհանուր առմամբ երկու տարբերակ՝ հասարակութեան գերջանք եւ «էլիտայի» գերջանք:

Այստեղ շատ նուրբ իրավիճակ է: Հայաստանը ներկայում գտնուում է սոցիալ-տնտեսական ծանր կացութեան մէջ: Այդ կացութիւնը հետեւանք է թէ ներքին ապաշնորհ ու անարդիւնաւէտ, անարդարացի կառավարման, թէ արտաքին ապաշնորհ քաղաքականութեան, արտաքին քաղաքականութեան մէջ մի շարք հակապետական գործողութիւնների, որ կատարուել են լոկ իշխանական շահի ելակէտով:

Այդ ամէնի համախումբ հետեւանքն այն է, որ 2016 թուականին Հայաստանի համար սպասուած է բաւական ծանր տնտեսական տարի: Հայաստանը փորձում է տարին ինչ որ չափով թէթեւացնելու համար հանել «մէկ զամբիւղում» տեղաւորած ձուերն ու այսպէս ասած հնարաւորինս դիւրեւիթիկացնել զամբիւղները: Սակայն, հաշուի առնելով հայաստանեան «էլիտայի» որակները, բնոյթը, մտածողութիւնն ու մոտիւացիաները, այդ ջանքերն առաւելագոյն կախուած են նրանից, թէ ինչքանով կը թուլանայ Ռուսաստանի կայսերական քաղաքականութեան պոտենցիալը: Իսկ դրա միտումները չափելն իսկապէս բարդ է:

Այդպիսով, անվտանգութեան խնդիրն իշխող համակարգի համար կարող է դառնալ «ալիբի», որ ներկայացուած է հասարակութեանը: Սոցիալ-տնտեսական ծանր վիճակը «կարարացում» նրանով, որ անվտանգութիւնը պահանջում է գերջանք եւ ռեսուրսների կենտրոնացում, այլապէս կարող է ծանր լինել, պատերազմ լինել, կորուստներ կարող են մեծանալ: Իշխող համակարգի համար այդ «ալիբի» կարող է լինել հասարակութեան սոցիալական դժգոհութիւնը մեղմելու միջոց, քանի որ համակարգը թէ անընդունակ է, եւ թէ չունի իրական ու խորքային այնպիսի բարեփոխումների ցանկութիւն, որոնք էապէս կը փոխեն Հայաստանի դիմադրունակութեան պոտենցիալը:

Միւս տարբերակը հենց այդ փոփոխութիւններն են, երբ անվտանգութիւնը ոչ թէ հասարակութեանը ներկայացուած «ալիբի» է, այլ իշխող համակարգին ներկայացուող պահանջ: Պահանջ, որի տրամաբանութիւնը «էլիտայի» համար ցաւոտ ու «ոչ շահաւէտ» խորքային վերափոխումներն են, տնտեսական իրական ազատականացումը, մրցակցային տնտեսութեանն ուղղուած արագ եւ խորքային քայլերը, որոնք կ'օգնեն կարճ ժամանակում էապէս մեծացնել թէ Հայաստանի մարդկային ստեղծագործական ներուժի ազատ եւ իրաւահավասար իրացման հնարաւորութիւնը, թէ Հայաստանի ներդրումային գրաւչութիւնն աշխարհում:

Գուցէ թուայ տարօրինակ, բայց անվտանգութեանն ուղղուած գերջանքը Հայաստանի դէպքում պէտք է ոչ թէ դառնայ հասարակութեանն ուղղուած բացատրութիւն, թէ ահա դուք ծանր էք

ԱՆԻ ՍԱՀԱԿԵԱՆ

«Ես դժուարանում եմ ասել, թէ ինչու է ԱՄՆ դեսպանատունը այս անգամ կարծես աննախադէպ կոշտ յայտարարութիւն արել Հայաստանում տեղի ունեցած ընտրութիւնների վերաբերեալ, որովհետեւ նախկինում Հայաստանում բոլոր ընտրութիւնները միջազգային հանրութեան արձագանքները եղել են զուսպ, եթէ չասենք շատ անգամ արձանագրել են «մի քայլ առաջ ընտրութիւն»: Հանրութիւնը միշտ դժգոհ է եղել եւրոպական կառույցների գնահատականներից, որ երկակի ստանդարտներ են կիրառում, կոշտ գնահատականներ չեն եղել» մեզ հետ զրոյցում նման կարծիք յայտնեց իրաւագաւորուպէս Ալեւորի Իշխանեանը անդրադառնալով՝ հանրաքուէի խախտումները մասին հաղորդումները լիարժէք յետաքննելու վերաբերեալ ԱՄՆ դեսպանատան յայտարարութեանը: Դիտարկմանը, որ համաձայն Հայաստանում իշխող տեսակէտի արեւմտեան կառույցների՝ Դեկտեմբերի 6-ի հանրաքուէի վերաբերեալ գնահատականները պայմանաւորուած են աշխարհաքաղաքական զարգացումներով, յատկապէս ԱՄՆ-Ռուսաստան, իշխանեանն կրկնեց, որ հիմա դժուարանում է ասել, թէ ինչու են այս տարի նման գնահատական տուել:

«Եթէ ընդունենք աշխարհաքաղաքական գործօնի առկայութիւնը, ապա մեր իշխանութիւններն առաւել եւս պէտք է զգոն լինէին, աշխարհը պիտի լինէին, աւելի զգոյշ լինէին, որ չչայտնուէին նման իրավիճակուէ: Նրանք թերեւս երես էին առել միջազգային կառույցների գնահատականներից եւ մտածել՝ այս անգամ էլ ինչ ասենք, կ'անցնի»: Նախօրէին, արձագանքելով Սահմանադրութեան հանրաքուէի խախտումների մասին հաղորդումները լիարժէք յետաքննելու վերաբերեալ ԱՄՆ դեսպանատան յայտարարութեանը, ԱԺ նախագահ Գալուստ Սահակեանը արել էր մի շարք ուշագրաւ յայտարարութիւններ: Հնարաւոր «սեւ ցուցակներ» մասին, որ կարող են յաջորդել դեսպանատան յայտարարութեանը, ԱԺ ղեկավարը յայտնել էր. «Սեւ ցուցակները պիտի այն ժամանակուայ մեծ աշխարհի բոլոր պետութիւնների համար կազմեն, որոնք իրենց աչքերը յառած տեսնում էին, թէ

այլուում, որովհետեւ անվտանգութիւնը ռեսուրս է պահանջում, այլ հակառակը՝ քանի որ անվտանգութիւնը ռեսուրս է պահանջում, Հայաստանի բնակչութիւնը պէտք է սկսի աւելի լաւ ապրել: Իսկ Հայաստանի բնակչութիւնն աւելի լաւ կարող է ապրել այն դէպքում, երբ իշխող համակարգը աւելի քիչ թալանի հանրային ու պետական ռեսուրսը:

Փաստացի յայտարարուած է համընդհանուր ռեսուրսային մոբիլիզացիա, գերջանքը հենց դա է: Բաց է մէկ, բայց առանցքային ու կարեւոր հարց՝ գերջանքը թալանի «արդարացուած» է լինելու, թէ թալանի դադարեցումը:

«ԼՐԱԳԻՐ»

մի ողջ ժողովրդի ոնց են ոչնչացնում: Էնպէս որ մեր արգումենտներն աւելի բարձր են»: Իշխանեանին Գալուստ Սահակեանի մեկնաբանութիւնները յիշեցրեցին 2003-2004թթ ԱԺ նախագահ Տիգրան Թորոսեանի յայտարարութիւնները, ով նմանատիպ իրավիճակում եւրոպային խորհուրդ էր տուել, թէ եւրոպացիները թող չլինեն, որ ֆաշիզմը եւրոպայում է եղել. «Պարզապէս ծիծաղելի է, երբ որ փաստարկ չեն ունենում, յանկարծ մէկ էլ նման բան են յիշում» ասաց իշխանեանը: Գալուստ Սահակեանի մէկ այլ յայտարարութեան առիթով, որ Հայաստանը ամերիկեան դրամաշնորհների կարիքը չունի, որ զրկուի, իրաւագաւորուպէս ասաց. «Գալուստ Սահակեանն ամենայն հաւանականութեամբ շտապել է ու չի խորհրդակցել նախագահի հետ, նման յայտարարութիւնը կարող է շատ ծանր նստել Հայաստանի վրայ, որովհետեւ Հայաստանը ամբողջապէս կախուած է միջազգային կառույցների դրամաշնորհներից ու վարկերից, էլ չեմ ասում ամերիկեան ամէնամեայ օգնութիւնը Հայաստանին ու Ղարաբաղին, ինչ վերաբերում է մնացած վարկերին՝ եւ Համաշխարհային բանկին եւ միջազգային վալիւտային ֆոնդերին, դրանք բացառապէս կախուած են ամերիկեան լոբիներից: Ուրեմն կամ Գալուստ Սահակեանը չզգիտի, որ ԱՄՆ-ն մեծ դերակատարութիւն ունի դրամական կորպորացիաներում, կամ գիտի բայց անզգոյշ քայլ է արել, որի համար նա դիտողութիւն կը ստանայ կուլիաների ետեւում»:

«ՀԱՅԵԼԻ»

ՄԱՍԻՍ
ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՏՆԱԹԵՐԹ
ՄՈՑԻԱԼ ԴԵՄՈՒԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Մրջանի
ԽՄԲԱԳԻՐ՝
SOPEA. ՄՐՇԱԿ ՉԱԶԱՆԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Նոր Հայաստանի Հավաքներին Խոչընդոտելու Հրահանգը Տրուել է Ամենավերելներից». Բաֆֆի Յովհաննիսեան

«Նոր Հայաստան» հանրային փրկութեան ճակատի ներկայացուցիչներն մարզային այցելութիւնների շրջանակում երթ, ապա քաղաքացիական հաւաք անցկացրին Գիւմրիի Թատերական հրապարակում:

Իր ելույթում «Ժառանգութիւն» կուսակցութեան առաջնորդ Բաֆֆի Յովհաննիսեանը նշեց, որ իրենց մարզային այցելութիւններին խոչընդոտելու հրահանգները եկել են «ամենավերելներից»:

«Դուք գիտէք, որ մենք հանդիպել ենք խոչընդոտների, որոնք կազմակերպուած են Սերժ Սարգսեանի կողմից՝ անկախ նրանից, ինքն Ալիեւի հետ է հանդիպում, թէ տանը նստած է, հենց իրենից են ուղարկուած մարզպետին, քաղաքապետներին, թուրքերին, որ իրենց մարդկանց ուղարկեն՝ խոչընդոտելու մեր հաւաքներին, նոյնիսկ կանանց մէջտեղ բերեն մեր առաջ, ուսուցիչներին, մայրերի միջոցով իրենց հարցերը լուծեն», - յայտարարեց Բաֆֆի Յովհաննիսեանը:

«Ժառանգութեան» առաջնորդը եւս մէկ անգամ կոչ արեց իրաւապահ համակարգի ղեկավարութեանը քրէական պատասխանատուութեան ենթարկել Դեկտեմբերի



«Ժառանգութիւն» կուսակցութեան առաջնորդ Բաֆֆի Յովհաննիսեան

6-ին Սահմանադրական հանրաքուէի արդիւնքները կեղծողներին:

Նշենք, որ «Նոր Հայաստանը» մարզային այցելութիւնների շրջանակում եղել է 14 քաղաքում, որոնցից մի քանիսում խոչընդոտների է հանդիպել:

Փրկութեան ճակատի օրակարգում Սահմանադրական փոփոխութիւնների հանրաքուէի արդիւնքներն անվաւեր ճանաչելն ու նախքան ընդդիմութեան պահանջած արտահերթ նախագահական եւ խորհրդարանական ընտրութիւնը ժողովրդի վստահութեան կառավարութիւն ստեղծելն է:

Շարմազանով. «Անցում է Կատարում Մի Փուլից Միւս Փուլ

Դեկտեմբեր 22-ին ուժի մէջ են մտնում նոր Սահմանադրութեան որոշ դրոյթներ: Հանրապետական կուսակցութեան (ՀՀԿ) խօսնակ Ազգային ժողովի փոխնախագահ Էդուարդ Շարմազանովի խօսքով, անցում է կատարուած մի փուլից միւս փուլ:

«Ես դէմ եմ կարուկ զծեր քաշելուն: Սա նոյն Սահմանադրութիւնն է, պարզապէս՝ բարեփոխուած: Մենք մի փուլից անցնում ենք դէպի այլ փուլ, բնականաբար, մեզ հետ վերցնելով այն դրականը, որ ունէր նախկին՝ կիսանախագահական համակարգը, եւ զնալ դէպի պառլամենտական համակարգ: Յուսով եմ, որ ճիշդ ճանապարհով ենք գնում, եւ ժամանակը ցոյց կը տայ, որ Դեկտեմբերի 6-ի որոշումը ճիշդ էր, Աստուած տայ, որ այդպէս լինի», - «Ազատութեան» հետ զրոյցում ասաց Շարմազանովը:

ՀՀԿ խօսնակը նշեց, որ այսօր իրենց թիւ մէկ խնդիրն Ընտրական օրէնսգրքի բարեփոխումն է: «Ընտրական օրէնսգրքն է թիւ մէկ խնդիրը: Պարտաւորուածութիւն ունենք՝ մինչեւ Յունիսի 1-ը Ընտրական օրէնսգրքը պէտք է բարեփոխուի, նոր Սահմանադրութեանը յարմարեցուի: Բնականաբար, մինչեւ Յունիսի 1-ը, արդէն զարնանային նստաշրջանը երբ որ սկսենք՝ Փետրուարին, կը սկսենք աշխատանքները հենց Ընտրական օրէնսգրքի վրայ, դա շատ կարեւոր է», - ասաց Շարմազանովը:

Դիտարկմանը, թէ մեծամասնական ընտրակարգին հրաժեշտ ենք տալիս, բայց մարդիկ սովոր են իրենց տարածքից պատգամաւոր ընտրել, եւ հարցին, թէ մարդկանց զրկելու են այդ հնարաւորութիւնից, ՀՀԿ խօսնակը պատասխանեց. - «Նոր խորհրդարանը չի լինելու Երեւանի խորհր-



Ազգային ժողովի փոխնախագահ Էդուարդ Շարմազանով

դարան, որովհետեւ Հայաստանի Հանրապետութեան խորհրդարանն է, եւ մեխանիզմներ կը լինեն, որպէսզի նաեւ տեղերի ներկայացուցիչները հնարաւորութիւն ունենան ներկայացնելու՝ մարզերի բնակիչները կոնկրետ:

«Էդ ամէն ինչը, մենք կարծում ենք, որ անհրաժեշտ է հրապարակալին՝ բոլոր քաղաքական ուժերը քննարկեն: Մի խելքը լաւ է, երկու խելքն աւելի լաւ է: Պէտք է նստել եւ քննարկել: Ամէն դէպքում, կը քննարկենք, կը տեսնենք: Վեց խմբակցութիւն կայ, ճիշդ չէ Հանրապետական ասի, թէ ինչ է լինելու: Կապ չունի, որ ամենամեծն է, բայց մենք լսելու ունակութիւն ունենք, եւ պէտք է լսենք նաեւ մեր ընդդիմութեան գործընկերների առաջարկները», - վստահեցրեց իշխող կուսակցութեան խօսնակը:

Անդրադառնալով վարչապետի հաւանական թեկնածուներին, Շարմազանովն ասաց. - «Ես կարծում եմ, որ պէտք է դանդաղ շտապել: Պէտք է յաջողութեան հասնել 2017 թուականի պառլամենտական ընտրութիւններում՝ դրանից յետոյ նոր մտածել: Բայց, այնուամենայնիւ, դանդաղ պէտք է շտապենք»:

Կալանաւորուել է Պաշտպանութեան Նախարարի Նախկին Տեղակալ Վահան Շիրխանեանը

Երեւանի կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրաւասութեան դատարանը պաշտպանութեան նախարարի նախկին տեղակալ Վահան Շիրխանեանի նկատմամբ որպէս խափանման միջոց ընտրեց երկամսեայ կալանքը:



ՀՀ պաշտպանութեան նախարարի նախկին տեղակալ Վահան Շիրխանեան

Աւելի վաղ Շիրխանեանին մեղադրանք էր ներկայացուել Քրէական օրէնսգրքի 223-րդ յօդուածի 2-րդ մասով՝ «Յանցաւոր համագործակցութեանը մասնակցելը», որը պատժուած է ազատազրկմամբ՝ վեցից տասը տարի ժամկէտով:

Պաշտպանութեան նախարարի նախկին տեղակալը ձերբակալուել էր շաբաթ օրը Ազգային անվտանգութեան ծառայութեան կողմից՝ Երեւանում վնասագերծմանը յանցարիմբի» գործի շրջանակում:

Շիրխանեանը իրեն մեղաւոր չի ճանաչում, սակայն Ազգային անվտանգութեան ծառայութեան կողմից յանցաւոր խմբի ղեկավար ներկայացուող Արթուր Վարդանեանին ճանաչում է: Շիրխանեանի փաստաբան Տիգրան Տէր-Եսաեանը խօսքով՝ վերջինիս հետ Շիրխանեանը ծանօթացել է այս տարի՝ Հայոց ցեղասպանութեանը նուիրուած միջոցառման շրջանակներում:

«Այնտեղ փաստարկները տարբեր են: Տուեալ մարդուն ճանաչում են որոշ մարդիկ, ովքեր որ այսօր կալանքի տակ են: Կան մարդիկ, որոնց ինքը ճանաչում է, չփոխել է: Այդ շրջանակներում գնում է քննութիւն», - նշեց փաստաբանը:

ԱԱԾ մամուլի կենտրոնի տարածած հաղորդագրութեան համաձայն, Շիրխանեանը «կասկածուած է Արթուր Վարդանեանի կողմից ստեղծուած յանցաւոր համագործակցութեանը մասնակցելու, դրա օգտին գործելու, կոնկրետ յանձնառութիւն եւ դերակատարութիւն ունենալու մէջ»:

Ազատութեան հրապարակում «Նոր Հայաստան»-ի քաղաքացիական հանդիպման ժամանակ շարժ-

ման անդամ Ժիրայր Սեֆիրեանն անդրադարձաւ Նորք Մարաշի զինուած խմբի վնասագերծմանը եւ Պաշտպանութեան նախարարի նախկին տեղակալ Վահան Շիրխանեանի կալանաւորմանը:

«Առհասարակ այդ մի խմբի քաղաքացիների ձերբակալութիւնները շատերի մօտ անլուրջ գագոցութիւն ունեցաւ, եւ իմ կարծիքով՝ շարունակուած է այդ անլուրջութիւնը: Այսինքն՝ գործող ռեժիմը իր համապատասխան՝ չափերտաւոր անվտանգութեան ծառայութիւններով շուտուանից մեր ժողովրդի վստահութիւնը չունեն, եթէ նրանք ապագայում նոյնիսկ ճիշդ գործ անեն, ժողովուրդը չի հաւատալու», - ասաց նա:

Ըստ նրա՝ այդ գործի ծալքերում կայ քաղաքական աստառ: Նա նկատեց, որ զինուած խմբին ձերբակալել են ամսի 25-ին, իսկ դրանից մօտ 25 օր յետոյ նոր վահան Շիրխանեանին:

«Շատ հարցեր են առաջանում», - ասաց նա եւ հարց բարձրացրեց, թէ եթէ Վահան Շիրխանեանը ներքաշուած լինէր, կը մնա՞ր հանգիստ Երեւանում:

«Ուստի այնքան խճճուած է այդ գործը, որ վստահ եմ, որ ռեժիմը դրա տակից չի կարող դուրս գալ», - ասաց նա:

«Ճիշդ կը լինէր, որ «Առաւօտ» թերթը գներ «Ազգ»-ը կամ հակառակը». «Ազգ»-ի խմբագիր

«Ընթերցողների թիւը քչանում է, օրաթերթերի քանակն՝ աւելանում», - հերթական անգամ արձանագրում է «Ազգ» օրաթերթի գլխաւոր խմբագիր Յակոբ Աւետիքեանը: Նա այն տպաւորութիւնն ունի, որ ժողովուրդը սկսել է ընթերցանութիւնն արհամարհել: «Այս հարցում հիմնականում մեղադրում են խմբագիրներին, տնօրէններին, որ չկարողացանք այս տարիների ընթացքում ընթերցող պատրաստել», - նշեց նա: Հարցին՝ մամուլն այսօր ազա՞տ է, պարոն Աւետիքեանն այսպէս արձագանքեց. «Մամուլն ազատ է, բայց ոչ անկախ: Կախուածութիւն կա շատ ուժերից»:

«Ազգ»-ը 23 տարի որպէս օրաթերթ է լոյս տեսել, սակայն վերջին երկու տարում հանդէս է գալիս որպէս շաբաթաթերթ: «Խնդիրը ֆինանսն է: Շատ թերթեր ունեն հովանաւորներ, ինչը մեր մամուլի գլխաւոր թերութիւններից մէկն է: Ժիշդ կը լինէր, որ բիզնես մտածելակերպ լինէր. օրինակ «Առաւօտ» թերթը գներ «Ազգ»-ը կամ հակառակը: Այսինքն, բիզնես ամուսնութիւններ լինէին, բայց ոչ «Առաւօտ»-ի խմբագիր Արամ Աբրահամեանն ունի այդ գումարը, ոչ էլ ես»:

«Առանց Սենաշնորհների Դեմ Պայքարի Տնտեսական Բարեփոխումներն Անիմաստ են»

Առանց մենաշնորհների դէմ պայքարի տնտեսական բարեփոխումներն անիմաստ են եւ արդիւնք չեն տալու: Այս մասին լրագրողների հետ հանդիպման ժամանակ նշել է տնտեսագէտ, Երեւանի նախկին քաղաքապետ, ՀԱԿ անդամ Վահագն Խաչատրեանը:

«Բիզնեսով զբաղուելու իրաւունքը բաժանել են իրենց զինակիցների միջեւ, իսկ մնացածի համար բոլոր հնարաւոր խոչընդոտներն են ստեղծուած: Նրանք չեն հասկանում, որ երկիրը ոչ միայն գործարարների, այլեւ աշխատատեղերի ու հարկերի պակաս ունի», - յայտարարել է Խաչատրեանը:

ԼՈՒՐԵՐ

Պուտինին Յայաստանում Առաել Դրական Են Գնահատում, Քան Այլ Երկրներում

Համաշխարհային քաղաքական վերնախաւի ներկայացուցիչներից Հայաստանում ամենաբարձր վարկանիշն ունի Ռուսաստանի Դաշնութեան նախագահ Վլադիմիր Պուտինը: Այս մասին են վկայում WIN/Gallup International-ի իրականացրած հարցման արդիւնքները:

ՌԴ նախագահի մասին դրական կարծիք է յայտնել Հայաստանում հարցմանը մասնակցած քաղաքացիներից 79 տոկոսը: Ի դէպ, Պուտինին ամենից աւելի աջակցում են հենց յետխորհրդային երկրներում, իսկ բացասաբար վերաբերուող հարցուածների ամենամեծ տոկոսը ԵՄ-ի եւ Եւրոպայի երկրներում է:

Աշխարհի 65 երկրում իրականացրած հարցման համաձայն առաջին տեղում յայտնուած ԱՄՆ նախագահ Բարաք Օբամայի օգտին բացասաբար են քուէարկել Հայաստանցիների 43 տոկոսը:

Հայաստանցիները դրական են արտայայտուել նաեւ Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդի մասին՝ 51 տոկոս, Անգելա Մերկելի մասին՝ 15 տոկոս:

Նշենք, որ ըստ 60-ից աւելի երկրներում իրականացրած հարցման՝ ԱՄՆ նախագահին դրական է գնահատում հարցուածների 59



Ռուսաստանի Դաշնութեան նախագահ Վլադիմիր Պուտին

տոկոսը, 29 տոկոսը նրան բացասաբար է վերաբերում: Օբամային յատկապէս ջերմօրէն են ընդունում Հարաւային Ասիայում (76 տոկոս), ԵՄ-ի երկրներում (67 տոկոս), Լատինական Ամերիկայում (65 տոկոս), Սահարայից հարաւ ընկած Աֆրիկայում (65 տոկոս), ինչպէս նաեւ Արեւելեան Ասիայում (65 տոկոս): Մերձաւոր Արեւելքի երկրներում եւ Հիւսիսային Աֆրիկայում ամերիկացի առաջնորդին դրականօրէն է գնահատում 33 տոկոսից ոչ աւելին:

ՊՆ խօսնակ. «Յրադադար Մենք, Ըստ Էութեան, Այլեւս Չունենք»

Հայաստանի եւ Ատրպէյճանի սահմանին եւ Լեւոնային Ղարաբաղի հետ շփման գծում գիշերը համեմատաբար խաղաղ է անցել: Այդ մասին լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասաց Հայաստանի պաշտպանութեան նախարարի խօսնակ Արծրուն Յովհաննիսեանը:

Խորհուրդ տալով դարաբաղեան հակամարտութեան մասին խօսելիս «խաղաղ» բառն այսուհետ չկիրառուել՝ նա յայտարարեց. - «Մենք չունենք խաղաղութիւն, մենք ունենք յարաբերական հանգիստ: Կարծում եմ, ոչ մէկի համար այլեւս գաղտնիք չէ, եւ չի մնացել մի մասնագէտ, մի փորձագէտ, անգամ մի վերլուծաբան բանակից հեռու, որ այս իրավիճակը պատերազմով չի գնահատում: Սա պատերազմ է, եւ ես կը խնդրէի ձեր ընդհանուր գրական տերմինաբանութեան մէջ օգտագործել եւ՝ «պատերազմ» բառը, եւ՝ չօգտագործել «հրադադարի խախտում» բառը, որովհետեւ հրադադար մենք, ըստ էութեան, այլեւս չունենք»:

Ըստ պաշտօնական հաղորդագրութիւնների, Դեկտեմբերի սկզբին ատրպէյճանական բանակը հրադադարի հաստատումից յետոյ առաջին անգամ կրակեց տանկերով, ինչպէս նաեւ գնդակահարութիւններ կայանքով ու հառաքից հրանօթներով: Յովհաննիսեանի խօսքով, անցումը ծանր գինատեսակներին յուսահատ քայլ է, որը ցոյց է տալիս Ատրպէյճանի ձախողումները:

«Ինչի՞ ինքը տրամաչափը հասցրեց D-30-ի կամ տանկի՞ որովհետեւ նախորդ բոլոր միջոցներով խոցելուց յետոյ մէկ գինուոր, երկու գինուոր՝ մահացաւ հայկական կողմից, ինքը ստացաւ աւելի հուժկու հակահարուած, կամ թոյլ չտուեցինք, որ դրանից աւել ինքը աներ, դրան գումարած՝ ինքն իրա ընդհանուր խնդիրը տապալեց՝ իր



Հայաստանի պաշտպանութեան նախարարի խօսնակ Արծրուն Յովհաննիսեան

գերագոյն գլխաւոր հրամանատարին գեկուցեց, որ իրա մօտ չի ստացուել որեւէ բան, յաջորդ անգամ փորձում է տրամաչափը մեծացնել, որպէսզի ուրիշ խնդիր կատարի», - ընդգծեց Արծրուն Յովհաննիսեանը:

Պաշտպանութեան նախարարի մամուլի խօսնակի փոխանցմամբ, սպառազինութիւնից բացի՝ հակառակորդը փոփոխել է նաեւ դիվերսիոն գործողութիւնների մարտավարութիւնն ու կազմը, ինչը, ըստ նրա, կրկին հայկական բանակի հզօր դիմադրութեան արդիւնքն է:

«Այսօր հակառակորդն իր յատուկ նշանակութեան ուժերի հիւծիլ ճանապարհով է գնում: Այսինքն՝ չյաջողելով որեւէ բան անել, դուք ինքներդ կարող էք նկատել, որ հակառակորդի մօտ վերջին երկու տարիներին շեշտակի նուազել են ժամկէտայինների զօհերը եւ աւելացել են պայմանագրային եւ սպայական զօհերը: Դա ինչի՞ մասին է խօսում, այսինքն՝ այսպէս ասած, ոսկէ ֆոնդի հիւծման ճանապարհով են գնում», - ասաց ՊՆ խօսնակը:

Իւրաքանչիւր Տարի Յայաստանի Բնակիչների Թիւը Նուազում Է



Հայաստանի Բաղաձայններ կը պատրաստուին մեկնել իրենց հայրենիքն. (Արխիւային նկար)

Պաշտօնական տուեալներով, ամէն տարի Հայաստանի բնակիչների թիւն առնուազն 30 հազարով նուազում է: Ընդ որում, վիճակագրութեան համաձայն, 2014 թուականին 2013 թուականի համեմատ Հայաստանից անվերադարձ հեռացողների թիւը 10 հազարով աւելի՝ 41 հազար է եղել:

Վիճակագրական ծառայութիւնը նաեւ փաստում է, որ մեկնողների հիմնական մասը՝ 63 տոկոսը դէպի Ռուսաստան է գնում, որտեղ, այսօրուայ դրութեամբ, այդ երկրից արտաքսուելու վտանգի տակ 170 հազար Հայաստանի քաղաքացի է ապրում: Այս տուեալները Հայաստանի միգրացիոն պետական ծառայութիւնը ստացել է Ռուսաստանի իշխանութիւններից, ընդ որում, նոյն աղբիւրի համաձայն, միայն անցած տարի Ռուսաստանից արտաքսուել է 25 հազար Հայաստանի քաղաքացի: Անգամ արժեզրկուած ուրբյու պայմաններում այդ քաղաքացիները դիմում են Հայաստանի միգրացիոն պետական ծառայութիւն՝ Ռուսաստան իրենց մուտքի արգելքը վերացնելու խնդրանքով:

Դեկտեմբերի 1-ի դրութեամբ աւելի քան 11 հազար մարդ է դիմել միգրացիոն ծառայութիւն՝ կրկին Ռուսաստան մեկնելու հնարաւորութիւն ստանալու ակնկալիքով: Նրանց մօտ 40 տոկոսի համար այդ արգելքն արդէն վերացուել է:

Սիրիական պատերազմի հետեւանքով Հայաստան տեղափոխուած հայերը կարծես փոխեցին միգրացիոն պատկերը: Փորձագէտները վստահեցնում էին, որ երկիրը

կը շահի. լաւ արհեստ ունեցող ու աշխատանքի սովոր սիրիահայերը տնտեսութեան մէջ աշխուժութիւն կը մտցնեն, բայց նրանցից շատերն ընդամէնը մէկ-երկու տարի կարողացան գոյատեւել Հայաստանում:

«Ազատութեան» սիրիահայ գրուցակիցը, որը չցանկացաւ ներկայանալ, նշեց, որ ինքն էլ մտադիր է հեռանալ Հայաստանից, ու պնդեց, որ Հայաստան եկած իր ծանօթների 50 տոկոսն արդէն հեռացել է:

«Ընկերներ ունեմ, որ եկան աստեղ, այսինքն, համարեա տարիուկէս, երկու տարի մնացին, փորձեցին աշխատել, մի քանի տեղ աշխատեցին, եւ երբ որ չստացուեց, վերադարձան Լիբանան, այնտեղից ՄԱԿ-ի միջոցով դիմեցին, արդէն հիմա Գերմանիայում են իրանք: Դրանց կողքին արդէն պարզ օրինակ ունենք մենք այստեղ, որ Հայաստանի Հանրապետութեան քաղաքացին, որն այստեղ ծնուել, մեծացել է, թողնում ստեղից գնում է աշխատելու, որ ընտանիքը պահի, կամ ընտանիքով է գնում», - ասաց «Ազատութեան» գրուցակիցը:

Ի դէպ, Հայ-ռուսական (սլաւոնական) համալսարանը դեռ 2012 թուականին Հայաստանում հետազօտութիւն էր արել ու պարզել, որ եթէ Հայաստանից հեռացողների 80 տոկոսը գնում է աշխատատեղերի բացակայութեան ու ցածր վարձատրութեան պատճառով, ապա մօտ 8 տոկոսը հեռանալու սոցիալական պատճառ չունի, նրանք երկիրը լքում են սոցիալ-հոգեբանական, այդ թւում՝ ապագայի նկատմամբ անվստահութեան պատճառով:

Յայաստանի Ներկայացուցիչը Այդպէս Ալ Չդարձաւ ՅԱՊԿ Գլխաւոր Քարտուղարը

Հայաստանի ներկայացուցիչն այդպէս էլ չստանձնեց Հաւաքական անվտանգութեան պայմանագրի կազմակերպութեան (ՀԱՊԿ) գլխաւոր քարտուղարի պաշտօնը, արձանագրում են Մոսկուայում կայացած գագաթնաժողովը լուսաբանող գրեթէ բոլոր ռուսաստանեան լրատուամիջոցները:

Թերթերը այս առիթով գրում են. - «Համաժողովի մասնակիցները հրաժարուեցին Հայաստանի ներկայացուցչին կազմակերպութեան գլխաւոր քարտուղար նշանակելու մտադրութիւնից՝ հանգելով եզրակացութեան, որ այդ քայլը կարող է ընկալուել որպէս ՀԱՊԿ-ի՝ Թուրքիայի հետ յարաբերութիւնները սրելու ցանկութեան դրսեւորում: Կազմակերպութեան

անդամ պետութիւնների մեծամասնութիւնը, բնականաբար, նման ցանկութիւն չունի», - գրում է թերթերը:

Գագաթնաժողովի նախօրէին Ռուսաստանի նախագահի օգնական Եուրի Ուշակովը յայտարարում էր որ, Գլխաւոր քարտուղարի ռուսացիան տեղի է ունենալու ռուսական այբուբենին համապատասխան: Նման պարագայում տրամաբանական է, որ կազմակերպութեան գլխաւոր քարտուղար կը դառնայ Հայաստանի ներկայացուցիչը:

Չնայած Ուշակովի յայտարարութեանը՝ համաժողովի աւարտին յայտնի դարձաւ, որ Նիկոլայ Բորզիլժայի լիազօրութիւնները երկարաձգուել են եւս մէկ տարով՝ մինչեւ 2017 թուականը:

ՀՆՉԱԿԵԱՆ ՔՍԱՆ ԿԱԽԱՂԱՆՆԵՐՈՒՄ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ԵԴՈՒԱՐԴ ՉՈՓՈՒՐԵԱՆԻ ԿԱԶՄԱԾ ՅՈՒՇ-ԿԵՆՍԱԳՐՈՒԹԵԱՆ ԳՐՔԻ ԹՐՔԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ՇՆՈՐՀԱՆԴԵԱԸ



«Էվրէնսէլ» հրատարակչու-թիւնը անցեալ ամիս լոյս ընծա-լած էր Հնչակեան քսան կախա-ղաններուն վերաբերեալ յուշ-կենսագրութեան գիրք մը: Սա 1921 թուականին Իսթանպուլի մէջ լոյս տեսած եւ իր տեսակին մէջ դասականացած «Քսան կա-խաղանները» անուն գործին թրքերէն թարգմանութիւնն էր: Այդ թուականին Եդուարդ Չո-փուրեանի աշխատասիրութեան հիման վրայ հրատարակութեան պատրաստուած գիրքը վերջերս թրքերէնի թարգմանեց լրագ-րող-հրատարակագիր Արիս Նալ-ճը: «Փարամագներ. Պէյնգըտի մէջ քսան կախաղաններ» խո-րագրով լոյս տեսած է գիրքին թրքերէն թարգմանութիւնը կ'ընդգրկէ նաեւ Սոցիալ դեմոկ-րատ Հնչակեան կուսակցութեան կանոնագրութիւնը, այլ վկայու-թիւններ, ինչպէս նաեւ մահա-պատիժի դատապարտուածներու զանազան գրութիւնները:

Երէկ երեկոցեան Բանկայթիի «Կալերի պիրզամանլար»ի եր-դիքին տակ տեղի ունեցաւ այս գիրքին շնորհանդէսը, որ ար-ժանացաւ կողմի թիւով գրասէր-ներու ուշադրութեան: Ձեռնար-կը կազմակերպուած էր «Նոս-տալժի» գրախանութի եւ «Էվ-րէնսէլ» հրատարակչութեան հա-մատեղ նախաձեռնութեամբ: Ատե-նախօսներն էին գիրքին թարգ-մանիչը՝ Արիս Նալճը եւ «Ակոս» շաբաթաթերթի հայերէն էջերու խմբագիր Բազրատ Կարապետ-Ներկայ էին նաեւ «Կալերի պիր-զամանլար»ի եւ համանուն հրա-տարակչութեան ղեկավար Օս-ման Քէօքէր եւ «Նոստալժի» գրախանութի տնօրէն Սիւհա Հա-

մամճը: Շնորհանդէսի մասնակիցները հետաքրքրական բացատրութիւն-ներ լսեցին ատենախօսներուն կող-մէ: Արիս Նալճը ընդհանրապէս կանգ առաւ գիրքին, անոր բո-վանդակութեան վերաբերեալ զա-նազան հանգամանքներուն եւ պա-րունակութեան մէջ տեղ գտած կենսագրութիւններու մանրամաս-նութիւններուն վրայ: Իր կարգին, Բազրատ Կարապետն ալ Հնչակ-եան քսան կախաղանները մեկնա-բանեց թէ՛ որպէս փաստ եւ թէ՛ որպէս երեւոյթ: Ան խօսեցաւ մե-րօրեայ իրականութեան վրայ անոնց ունեցած անդրադարձին շուրջ: Փարամագի եւ տասնինն ճակատագրակից ընկերներուն ապ-րածը Բազրատ Կարապետն ներկա-յացուց նաեւ թուրքի մէջ ընկեր-վարական մշակոյթի ձեւաւորման տեսանկիւնէն:

Երեկոյթի ընթացքին ատե-նախօսները պատասխանեցին նա-եւ ներկաներու հարցումներուն: Ինչպէս ծանօթ է, Հնչակեան քսան կախաղաններու երեւոյթը վերջին շրջաններուն թուրքի մէջ հետզհետէ աւելի յաճախակի-օրէն օրակարգի վրայ կու գայ՝ հայկական հարցի թապու մը ըլ-լալու դադրելու հանգամանքի ծի-րէն ներս: Զուգահեռաբար, վեր-ջին տարիներուն տեղի կ'ունենան Հնչակեան քսան կախաղաններու ոգեկոչումներ, որոնց վերջինը տեղի ունեցած էր Էմիլիոն Գաբրիելի ղեկավարութեամբ: Բազրատ Կարապետն մար-մինները, սակայն գերեզմանա-տան տարածքէն ներս ցարդ ան-յայտ կը մնայ անոնց թաղուած ստոյգ վայրը:

Ատրպէյճանի Քաղաքականութիւնը Ուղղուած Է Հակամարտութեան Սրման

Շարունակուած էջ 1-էն
Հաշուի առնելով տարածաշր-ջանում վերջին շրջանում ձեւա-ւորուած լարուած մթնոլորտը՝ պէտք է բացատրել, որ այդ քայլին Ատրպէյճանը գնացել է դրսի կողմի յուշումով կամ աջակցութեամբ», ըսաւ Սերժ Սարգսեան, ակնարկե-լով Ռուս-թրքական յարաբերու-թիւններու վատթարացման: Հայաստանի նախագահը այս յայտարարութիւնները կատարեց,

որ մը առաջ Զուրաբեհի մայրաքա-ղաք Պրերնի մէջ Իլհամ Ալիեւի հետ իր ունեցած հանդիպումէն ետք: Ըստ հրատարակուած տեղեկութիւն-ներու այս հանդիպումը որեւէ դրա-կան արդիւնք չէ ունեցած: Կողմերը համակարծիք եղած են մէկ հարցի շուրջ, որ լայնածաւալ պատերազմէն պէտք է խուսափել: ՀԱՊԿ-ի նիստէն զատ, Սերժ Սարգսեան մասնակցեցաւ Եւրասեա-կան Տնտեսական Միութեան անդամ երկիրներու գագաթի ժողովին:

ԱՄԱԼ ԳԼՈՒՆԻՒ ԱՆՈՒԱՆ ԿՐԹԱՆՊԱՍ

IdEA հիմնարկի 100 Lives նախաձեռնութիւնը պաշտօնապէս յայտարարեց իր տարեկան նոր կրթանպաստի հրատարակումը, որ կը կրէ միջազգային ծանօթ իրա-ւաբան Ամալ Ալամըտին Գլուսիի անունը: Սոյն կրթանպաստը մաս կը կազմէ 100 Lives նախաձեռնութեան բարեհաջող ընդհանուր ջանքե-րուն, որոնք կը նպատակադրեն ամրապնդել միջ-մշակութային կրթութիւնը եւ փոխադարձ հասկա-ցողութիւնը՝ ընկերային եւ մարդա-սիրական ծրագրերու ընդմէջէն: Ամալ Գլուսիի անունան կրթանպաստը իւրաքանչիւր տա-րի պիտի տրամադրուի լիբանանցի աշակերտուհի մը, որ հնարա-ւորութիւն պիտի ունենայ հետե-ւելու Դիլիճանի UWC միջազգա-յին գոլէճի երկու տարի երկարող միջազգային պաշարօրիայի դա-սընթացներուն: Թեկնածուները պիտի ընտրուին կրթական բացա-ռիկ արդիւնքներու եւ մարդկային իրաւանց հարցերու հանդէպ ցու-ցաբերած հետաքրքրութեան հի-ման վրայ: Առաջին կրթանպաստը ստա-ցած է լիբանանցի Փամելա Թապը-րանին, որ կ'ուզէ հետապնդել սե-ւերու միջեւ հաւասարութեան եւ մարդկային իրաւանց հարցեր:



«Սոյն կրթանպաստը լիբանանցի աշակերտուհիներու պիտի տայ իւ-րապատուկ հնարաւորութիւն մը: Միջ-մշակութային կրթութիւնը եւ ար-տերկրի մէջ դասընթացներու հե-տեւելը կրնան մեծ փոփոխութիւն-ներ յառաջացնել: Երախտապարտ եմ 100 Lives նախաձեռնութեան, որ դուներ կը բանայ այս տաղանդաւոր եւ բացառիկ աղջիկներուն առջեւ», - ըսաւ Ամալ Գլուսի: Նշենք, որ կրթանպաստը ստա-ցողին ընտրութիւնը պիտի կա-տարուի UWC գոլէճի Լիբանանի տեղական յանձնախումբին կողմէ:

«1915»-Ը ՇԱՐԵՑ «ՎԱՆԱ ԼԵՒ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԻՆՓԱՌԱՏՕՆԻ ԺԻՒՐԻ ԶԱՏՈՒԿ ՄՐՑԱՆԱԿԸ

«Վանա լճի» միջազգային կի-նոփառատօնի փակման գիշերը «1915» հոգեբանական թրիլլերը խլացնող ծափահարութիւնների ար-ժանացաւ ցուցադրութեանը ներ-կայ քիւրտ եւ թուրք հանդիսատե-սի կողմից եւ Դեկտեմբերի 11-ին վանի կեդրոնում տեղի ունեցած արարողութեան ժամանակ շահեց ժուրիի յատուկ մրցանակը: Կարին Յովհաննիսեանի եւ Ալէք Մուհիբ-եանի համահեղինակութեամբ ստեղծուած ֆիլմը ցուցադրման նախաշէմին յայտնուել էր հակա-սովորութիւնների կեդրոնում, քանի որ տեղական հակահայկական խմբերը դատապարտում էին փառատօնը եւ սպառնում փառատօնի կազմակեր-պիչներին՝ Արեւելեան թուրքիայի իրական դէմքը ցոյց տուող նման կինոնկար ներկայացնելու համար: Հայաստանի առաջին արտ-գործնախարար ու Ռազմավարա-կան եւ ազգային հետազոտութիւն-ների հայկական կեդրոնի (ՌԱՀՀԿ) հիմնադիր տնօրէն Ռաֆֆի Կ. Յով-հաննիսեանի գործադիր պրոդիւ-սերութեամբ, հանրայայտ Սիմոն Աբգարեանի եւ Անտէլա Սարաֆ-եանի ղլխաւոր դերակատարու-

թեամբ եւ Սերժ Թանկեանի ինք-նատիպ երաժշտութեամբ ստեղծ-ուած այս ֆիլմը տուրք է 1915թ. Հայոց ցեղասպանութեան ժառան-գութեանը: Ներկայացնելով ֆիլմը Վա-նում, Կարին Յովհաննիսեանն անդ-րադարձել է թուրքիայի մէկդար-եայ մերժմանը եւ ասել Հայոց ցեղասպանութեան մասին իր հզօր խօսքը՝ միեւնոյն ժամանակ ճանա-չելով քաջութիւնն այն մտաւորա-կանների ու կազմակերպիչների, ովքեր 100 տարի անց նախաձեռնել են նման քննարկում: Քրտերն, իրենց հերթին, նե-րողութիւն են ինդրել հայերից՝ քիւրտ եւ թուրք ժողովուրդների անունից: Նոյնիսկ պետական հե-ռուստատեսութեամբ նրանք չեն խուսափել «Ցեղասպանութիւն» բա-ռից եւ չաւելել են. «Յուսով ենք, որ կարող ենք այստեղ ունենալ ընդհա-նուր կեանք: Կ'ուզենայինք, որ անց-եալը գոյութիւն չունենայ»: Ամ-բողջ մի շաբաթ նման տրամադրու-թիւններ էին թեւաւորում վանում, որտեղ այդ հողի հետ հայկական կապերը ճանաչելու շարժումը լաւ թափ առաւ:

Հայ Ամերիկեան Խորհուրդի Յայտարարութիւնը

Շարունակուած էջ 1-էն
տանը եւ Ֆրանսան, որպէս միջ-նորդ երկիրներ, ճնշում բանեցնեն Ատրպէյճանի վրայ, որպէսզի ան ընդունի հիմնական զսպիչ միջո-ցառումներ, զինադադարի խախ-տումները կանխելու ուղղութեամբ: «Առաւել եւս, ՀԱԽ կոչ կ'ընէ եԱՀԿ Միւսկի Խումբի համանա-խագահ դեպքում ձէյմզ Ուորլիքին, Պետական Գրասենեակին եւ Սպիտակ Տան, որպէսզի ընդառաջեն Գոնկ-րէսի նախադրանքներու պահանջներուն եւ հրատարակու դատապարտեն սահմանային գծի վրայ արձանագ-րուող յարձակողական յատուկ գոր-ծողութիւնները եւ չբաւարարուին

ընդհանրական խօսքերով, որոնք կոչ կ'ընեն կողմերուն զսպուածու-թիւն ցուցաբերելու: Այս ձեւական քաղաքականութիւնը՝ բոլորի հետ հաւասար ըլլալու գծով, ձախողե-ցաւ կացութիւնը մեղմացնել եւ ընդհակառակը, այս քաղաքակա-նութիւնը վտանգաւոր աստիճանի հասցուց լարուածութիւնը»: ՀԱԽ կը յայտարարէ որ, այս կացութեան դուրս գալու գալու համար պէտք է բացէիբաց դատա-պարտել ատրպէյճանական կողմին եւ քաջալերել որ Լեռնային Ղա-րաբաղի ժողովուրդին կողմէ ազատօտէն ընտրուած ներկայա-ցուցիչները ներգրաւուին բանակ-ցութիւններուն մէջ:

«ԹՈՒՐՔԻԱ 2015-ԻՆ ՇԱՐՈՒՆԱԿԵՑ ԾԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ»- ԶԱՐԱՔՕԼՈՒ



Թուրք ազատամիտ հրապարակագիր ու մտաւորական Ռակրայ Զարաքօլու, որ ներկայիս Եւրոպայի միջուկում է, ելույթ մը ունեցաւ Պերլինի Շարլոթթենպոլերկ շրջանի քաղաքապետութեան սրահին մէջ, Հայոց եկեղեցւոյ ու Մշակութային կեդրոնին կողմէ կազմակերպուած հաւաքի մը ընթացքին: Բանախօսութեան նիւթն էր՝ «2015 թուականը ի՞նչ բերաւ»:

Զարաքօլու ըսաւ, որ հարիւրամեակը լաւ առիթ մըն էր, որպէսզի Թուրքիա երես առ երես գար իր պատմութեան հետ, բայց ոչ միայն ներողութիւն չի ստուգում չվճարեց, այլ նոյնիսկ հայ ժողովուրդին նկատմամբ յարգանք չկրցաւ ցուցաբերել: «Հայ ժողովուրդը բան մը կորսնցուց ասկէ: Ո՛չ: Դարձեալ Թուրքիան է որ կորսնցուց», - շեշտեց ան: Ըստ Զարաքօլուի՝ Թուրքիա, որ կը յամառի իր կեցուածքը չփոխելուն վրայ, քայլեր առաւ ո՛չ թէ դէպի ժողովրդավարութիւն, այլ դէպի առաւել ամբողջատիրութիւն: Հայոց Յեղասպանութեան ուրացումը այս ամբողջատիրութեան մէկ գաղափարախօսութիւնը դարձաւ: Մինչդեռ Թուրքիոյ ժողովրդավարացման պայմաններէն մէկը՝ Յեղասպանութեան ճանաչումն ու ներողութիւն խնդրելն է, որ այլեւս կենսական անհրաժեշտութիւն մը դարձած է ո՛չ թէ գոհուած ժողովուրդներու տեսանկիւնէն, այլ՝ Թուրքիոյ գոյատեւման տեսանկիւնէն: «Թուրքիա նոյն սխալները յամառօրէն կը կրկնէ: Մինչդեռ անհրաժեշտ դարձած է, որ անգամ մըն ալ երբեք ըսելու

մտայնութիւնը հասունայ: Թուրքիոյ Հանրապետութիւնը իր այս պնդումով անուղղակիօրէն ըսել կ'ուզէ, որ եթէ պէտք ըլլայ՝ դարձեալ կ'ընենք նոյնը: Թուրքիա հարիւր տարի ետք ուստում մը ըրած է դէպի թալէաթ-էնվեր-ձեմալ եռեակի արկածախնդրական քաղաքականութիւնը», - պնդեց ան:

Զարաքօլու, որ իր երկար բանախօսութիւնը զարգացուց այս վերլուծումներով՝ ըսաւ, որ հարիւր տարի առաջ սկսած Յեղասպանութիւնը 2015-ին իր վերջնական հանգրուանին հասաւ՝ Սուրիոյ եւ Իրաքի մէջ վերապրող երրորդ կամ չորրորդ սերունդ հայերուն, ասորիներուն եւ եգիպտացիներուն «արմատը չորցնելով»: «Հայերն ու եգիպտացիները հանգիստ կեանք մը կ'ապրէին Սուրիոյ ու Իրաքի մէջ. ա՛յդ ալ վերջացաւ», - ըսաւ ան:

Զարաքօլու ամբաստանեց արեւմտեան երկիրները, որոնք ոչինչ ըրին հայերուն համար: Ան վերլուծեց նաեւ Թուրքիոյ այժմու քաղաքականութիւնը՝ գայն «ճիհատապաշտութիւն» կոչելով: Զարաքօլու յիշեցուց սակայն, որ այս տարի Ապրիլ 24-ին, էջմիածինի մէջ Յեղասպանութեան գոհերը գոհ ըլլալէ դադարեցան ու սրբութեան տիտղոսին արժանացան: «Ասիկա խորհրդանշական ձեռնարկ մըն էր, որ գոհը կը սրբացնէր: Անոնք գերեզմանները բաց չեն, անոնք թաղուած են ամբողջ ժողովուրդի մը սիրտին մէջ: Իսկ Թուրքիա պիտի շարունակէ մնալ մարդկութեան դէմ գործուած ծանր յանցանքի մը տակ», եզրակացուց Թուրք մտաւորականը:

ԾԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ ԳՐԵԹԷ ԲՈԼՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԵՂԵԼ Է ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ



Դեկտեմբերի 18-ին Հայոց ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտի ժամանակաւոր ցուցադրութիւնները սրահում տեղի ունեցաւ «Մաքառելով կեանքի ու արժանապատուութեան համար. ինքնապաշտպանական մարտերը Մեծ եղեռնի տարիներին» խորագրով ժամանակաւոր ցուցադրութեան բացման արարողութիւնն ու համանուն կատալոգի շնորհանդէսը: Միջոցառումը նուիրուած էր Անդրանիկ Զօրավարի ծննդեան 150-ամեակին: Ծրագիրն իրականացրել է «Պրոսպեկտուս» տարածաշրջանային եւ քաղաքական հետազոտութիւնների կեդրոն» հասարակական կազմակերպութիւնը՝ ՀՀ Նախագահի աշխատակազմի կողմից տրամադրուող դրամաշնորհի եւ Հայաստանի երիտասարդական հիմնադրամի յալտարարած մրցութի շրջանակում:

Հայոց ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտի տնօրէն Հայկ Դեմոյեանը նկատեց, որ ցուցադրութիւնն առաջինն է՝ այսպիսի նիւթի պարունակութեամբ եւ բովանդակութեամբ: «Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցը մենք աւարտում ենք հենց այս շեշտադրմամբ՝ ինքնապաշտպանութիւն: Մեզանում թիւր կարծիք կայ, թէ Յեղասպանութեան ժամանակ մարդիկ հլու-հնազանդ գնացել են դէպի մահը: Այդպէս չէ, դա ոչ մասնագիտական պատկերացում է: Յեղասպանութիւնները միշտ ուղեկցում են դիմադրութեամբ, դա բնութեան օրէնքն է: Եւ գիւղերում, քաղաքներում ապրող մեր հայրերին երբեք, կանայք, ծերունիները, իրենց լուծման են ներդրել փրկութեան համար: Դա միայն

փրկութեան պայքար չի եղել, դա եղել է արժանապատուութեան համար պայքար», - նշեց Հայկ Դեմոյեանը:

Հայոց ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտի փոխտնօրէն Սուրէն Մանուկեանն ընդգծեց, որ ծանրագոյն իրավիճակում, անյուսալի եւ պետական մեքենայի ոչնչացման գործընթացի պայմաններում հայ մարդն անգէն, ձեռքի տակ եղած միջոցներով կազմակերպել է ինքնապաշտպանութիւն: «Գրեթէ բոլոր բնակավայրերում եղել է ինքնապաշտպանութիւն: Իհարկէ, մենք գիտենք ինքնապաշտպանութեան մեծ դրուագների մասին՝ Մուսա լեռ, Վան, Շապին Գարահիսար, Ուրֆա եւ այլն: Մեր այս ցուցադրութեան նպատակն է տեղեկացնել, որ միայն այդտեղ չեն եղել ինքնապաշտպանական մարտեր: Ու դա շատ կարեւոր է եւ ցոյց է տալիս, որ միայն կռուող, իր գոյութեան համար պայքարող ազգը կարող է գոյատեւել: Եւ սա ապագային, ազգապահպանմանը միտուած ուղերձ է: Պատահական չէ, որ ցուցադրութիւնը նուիրուած է Անդրանիկ Զօրավարի 150-ամեակին: Անդրանիկ Զօրավարն այն կերպարներից է, որ իր մէջ ամփոփում է մեր ժողովրդի պայքարը», - ասում է Սուրէն Մանուկեանը:

Տասնվեց խորագրերից բաղկացած երկլեզու (հայերէն, անգլերէն) ժամանակաւոր ցուցադրութիւնը եւ համանուն կատալոգը կոչուած են ընդգծելու Հայոց ցեղասպանութեան պատմութեան հետազոտողները՝ բազմաթիւ

Շաբ.ը էջ 18

Bedros S. Maronian
818/500-9585

Siamanto B. Maronian
818/269-0909

SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs

<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> • Life Insurance • Health Insurance • Group & Individual • Long Term Care • Disability 	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> • Estate Planning • Will & Living Trust • Full Annual Review • Mortgage Protection • College Planning 	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> • Workman's Compensation • Employee Benefits • Annuity • IRA • 401K & 403B
--	---	---

A.B.A. INSURANCE SERVICES

Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Ամիրաճեղս է

Coverage & Protection should be on the top of your priority list.

ԳԻՏԱԺՈՂՈՎ.- «ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԺԽՏՈՂԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՆՈՐ ՕՍՄԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՕՍՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ»



ՀՀ սփիւռքի նախարարութեան նախաձեռնութեամբ ՀՀ ԳԱԱ նախագահութեան նիստերի կլոր դահլիճում անցկացուող «Հայոց ցեղասպանութեան ժխտողականութիւնը նոր օսմանականութեան գաղափարախօսութեան համատեքստում» գիտաժողովը շարունակել է աշխատանքը եւս երկու թեմատիկ նիստերով: Երկրորդ նիստը վարել է ՀՀ սփիւռքի փոխնախարար Սերժ Սրապիտոնեանը, հաղորդում է «Հայերն այսօր»-ը:

«Նոր օսմանականութեան հիմնահարցերը եւ յետխորհրդային թիւրքազիտութիւնը գեկուցումով հանդէս է եկել ԵՊՀ թուրքազիտութեան ամպիոնի վարիչ Ալեքսանդր Սաֆարեանը:

Միջազգային եւ համեմատական իրաւունքի կենտրոնի տնօրէն Տարօն Սիմոնեանը գեկուցել է «Հայոց ցեղասպանութեան համար միջազգային իրաւական պատասխանատուութեան հիմքերը եւ կառուցակարգերը» թէմայով:

Բուռն քննարկումների առիթ է դարձել իրաւաբանական գիտութիւնների թեկնածու Լեւոն Գէորգեանի «Հայոց ցեղասպանութեան մերժողականութիւնը՝ ՄԻԵԴ-ի Փերինչեքն ընդդէմ Շուէյցարիայի վճռից առաջ եւ յետոյ» թէմայով գեկուցումը:

Պատկերաչարով «Հայոց ցեղասպանութեան ժխտման մեթոդներն ու մեխանիզմները արդի թուրքիւրաչու» թէմայով գեկուցում է ներկայացրել ՀՀ ԳԱԱ արեւելագիտութեան ինստիտուտի աւագ գիտաշխատող Անուշ Յովհաննիսեանը:

Երրորդ թէմատիկ նիստը վարել է ԵՊՀ արեւելագիտութեան ֆակուլտետի ղեկանի տեղակալ Ռուբէն Մելքոնեանը:

Թուրքագէտ, Արեւմտահայոց հարցերի ուսումնասիրութեան կենտրոնի թուրքերէնի բաժնի վարիչ, պ.գ.թ. Մելիքի Անուսեանը ներկայացրել է «Երիտթուրքերի 1919-1921թթ. դատավարութիւնների որոշ փաստերի խեղաթիւրման փորձեր թուրք ժամանակակից պատմագրութեան մէջ» թէմայով գեկուցումը:

«Հայոց ցեղասպանութեան ժխտողականութեան առանցքային կէտերը՝ դերակատարների եւ դրսեւորումների ձեւափոխման համատեքստում» թէմայով գեկուցել է

ցեղասպանագէտ, քաղաքագէտ Մարի Յովհաննիսեանը, կատարուել են կարեւոր մեթոդաբանական առաջարկներ ժխտողականութեան դէմ պայքարում:

Նիստի վերջում «Եփրատ» ուսումնասիրութիւնների կենտրոնի նախագահ էլորգ Պետրոսեանը հանդէս է եկել «Ընդհանուր ցաւ. Հայոց ցեղասպանութեան ժխտման հարցում թուրքիայի արդի քաղաքականութիւնը» թէմայով գեկուցումով:

Նիստի վերջում ծաւալուել են քննարկումներ, արուել են առաջարկութիւններ: Գիտաժողովի մասնակիցները ողջունել են համաժողովներ, գիտաժողովներ կազմակերպելու, ուսումնասիրութիւններ պատուիրելու սփիւռքի նախարարութեան հետեւողականութիւնը եւ նախաձեռնողականութիւնը հայոց ցեղասպանութեան ժխտողականութեան դէմ պայքարում, նախանձախնդրութիւնն ու պատրաստակամութիւնը Հայ դատի եւ հայոց պահանջատարութեան հարցերը միշտ կենսունակ պահելու եւ առաջ տանելու հարցերում:

Ամփոփելով գիտաժողովի արդիւնքները՝ ՀՀ սփիւռքի նախարար Հրանուշ Յակոբեանն անդրադարձել է գիտաժողովի արդիւնաւէտ աշխատանքին եւ դիպուկ հարցադրումներին: Նա մասնաւորապէս նշել է. «Գիտաժողովը, որով աւարտում ենք տարին, խորհրդանշական է: Ամփոփելով 2015 թուականը, Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցի միջոցառումները՝ այս գիտաժողովով պնդում ենք ժխտողականութեան դէմ պայքարում մեր հաստատակամութիւնը: Ուրախալի է, որ հաւաքուել են տարբեր մասնագիտութիւնների տէր մարդիկ՝ թուրքագէտներ, ցեղասպանագէտներ, իրաւաբաններ, պատմաբաններ, միջազգայնագէտներ եւ իւրաքանչիւրը խնդիրը դիտարկում է իր մասնագիտական տեսանկիւնից, ինչը հնարաւորութիւն է տալիս ընդլայնել գիտելիքները:

Ուրախ եմ, որ այսքան հզոր, ուժեղ, գիտուն, մրցունակ երիտասարդներ ունենք: Կարծում եմ, որ այս գիտաժողովի նիւթերը պէտք է տպագրուեն, նաեւ թարգմանուեն եւ տարածուեն Սփիւռքում: Անհրաժեշտ է, որ Սփիւռքը լսի, իմա-

նայ ձեր մտավախութիւնների մասին, որ այսօր հնչեցին այստեղ: Անդրադառնալով ժխտողականութեան դրսեւորումներին՝ պէտք է նշենք, որ թուրքիան վայրի ժխտողականութիւնից անցել է աւելի քողարկուած՝ սողացող ժխտողականութեան, ինչն առաւել վտանգաւոր եւ մոլորեցնող է: Ողջունում եմ, այստեղ հնչած կարեւոր հարցադրումները, մեթոդաբանական առաջարկները, որոնք անհրաժեշտ են ուսումնասիրել, վերլուծել եւ կոնկրետ առաջարկներ անել: Կարծում եմ, որ ցեղասպանագիտութեան միջազգային կենտրոն ստեղծելու անհրաժեշտութիւնը կայ, որը կը զբաղուի գլոբալ ֆորումները կազմակերպելով:

Առաջարկում եմ իւրաքանչիւր տարի դեկտեմբերին եւս այս թէմայով գիտաժողով կազմակերպել, կարծում եմ, որ մէկ տարին բաւական է թուրքիայի կեղծ քաղաքականութիւնը, տարածաշրջանային նոր զարգացումներն ուսումնասիրելու եւ եզրակացութիւններ անելու համար: Ուզում եմ, որ երիտասարդները շարունակէք դիտարկել թուրքական քաղաքականութեան նրբերանգները եւ անպայման համագործակցէք մեզ հետ: Պէտք է այսուհետեւ եւս զգաստ լինենք: Յաւօք թեման մէկ երկու տարում չի փակուի, երկար ու ծանր գործընթաց է: Եւ եթէ մի օր թուրքիան անգամ ճանաչի ցեղասպանութիւնը, միւսնոյն է հատուցման գործընթացը երկար է լինելու: Շնորհակալ եմ ձեր արդիւնա-

ւէտ ու մանրակրկիտ աշխատանքի համար»:

Յիշեցնենք, որ Դեկտեմբերի 18-ին ՀՀ ԳԱԱ նախագահութեան նիստերի դահլիճում մեկնարկել է ՀՀ սփիւռքի նախարարութեան նախաձեռնութեամբ կազմակերպուած «Հայոց ցեղասպանութեան ժխտողականութիւնը նոր օսմանականութեան գաղափարախօսութեան համատեքստում» գիտաժողովը: Առաջին թէմատիկ նիստում մասնակիցները ներկայացրել են մի շարք գեկուցումներ:

«Թուրքիան էրտողանի նէո-օսմանականութեան շրջանում. արկածախնդիր արտաքին քաղաքականութիւնը եւ լիտի ժխտողականութիւնը թէմայով գեկուցել է ՀՀ ԳԱԱ արեւելագիտութեան ինստիտուտի տնօրէն Ռուբէն Սաֆարեանը:

